ՀԵՍՈՒՐԱՆԱԿԱՆՆԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ. ՇՆՈՐՀՔ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«Մեսրոպեան այբուբէն եւ աւետարանների սկզբնատառերը. դպրութիւն եւ Աւետարանի լոյս Հայաստանեայց Եկեղեցու Ս. Գաթում, այս է ճեմարանի հիմքն ու կատարը»[1]:
Արշակ Տէր-Միքէլեան

1945 թ. նոյեմբերի 1-ին, հակառակ քաղաքական, տնտեսական եւ ընկերային մարտահրավերների, երջանկահիշատակ Գեւորգ Զ. Չորեքչյան Կաթողիկոսը (1945-1954 թթ.) վերաբացեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հեսեւյալ նշանաբանով. *«Մենք հուսալքման սովորություն չունենք եւ հեշտությամբ չենք նահանջում մեր ճշմարիտ եւ արդար նպատակներից»*[2]: Բազում դժվարություններով, բայց մեծ սիրով եւ անսահման եվիրումով Գեւորգ Զ. Հայրապետը կարողացավ կյանքի կոչել իր ծրագրերը: Հայրապետն ուշադրությունը սեւեռում էր ոչ թե դիմորդների կամ ուսանողների թվաքանակի, այլ որակի վրա, քանի որ պատերազմից հետո վերազարթոնք ապրող հայությունը թե՛ եկեղեցականի եւ թե՛ մտավորականի կարիք ուներ: Ճեմարանի հետ կապված սպասումներն ու հաջողությունները, ցավոք, մնացին Գեւորգ Զ. Կաթողիկոսի մտավոր ամբարում:

Վազգեն Ա. Հայրապետի կաթողիկոսության տարիներին (1955-1994 թթ.) ճեմարանի գործունեությունն առավել ընդլայնվեց: 1955-1956 ուսումնական տարվա համար Վեհափառ Հայրապետը որոշ փոփոխություններ կատարեց. ուսումնական ծրագրերում ավելացրեց փիլիսոփայություն եւ հոգեբանություն առարկաները եւ անգամ դասավանդումն ինքն ստանձնեց: Հակառակ իր բազմազբաղ լինելուն՝ երբեք չհրաժարվեց ճեմարանում դասավանդելուց՝ պատճառաբանելով, որ ինքն անձամբ պետք է ճանաչի սաներին, մանավանդ նրանց, որոնք մեր Սուրբ Եկեղեցու սպասավորները պիտի լինեն[3]:

1 **Արշակ Տէր-Միքէլեանի** ճառը. «Արարատ» ամսագիր, 1892, էջ 919:
2 «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., Երեւան, 1999, էջ 658-659:
3 **Եղիշե ավ. քհն. Սարգսյան,** Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանը (1945-2006), Ս. Էջմիածին, 2009, էջ

Կրթության գործում Վազգեն Հայրապետի աչալրջությունն ու պահանջկոտությունն անսպառ էին: Նա հեպեռողականորեն քննում էր հոգեւոր կրթական այս հաստատության տեսուչների, տեսչական անդամների եւ դասախոսների կատարած աշխատանքները: Երանաշնորհ Հայրապետի մշտամնա տեսլիքն էր. Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը դարձնել «աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ»[4]: Վեհափառ Հայրապետի համար շատ կարեւոր էր տեսչի հոգեւորական լինելը:

1969-1970 ուսումնական տարին ճեմարանի համար նշանակալի էր: 1969-ի սեպտեմբերի 10-ին ճեմարանի տեսչի պաշտոնակատար Տ. Հովհաննես քհն. Մարուքյանը հանդես է գալիս գրավոր ուղերձով եւ ողջունում Հոգեւոր ճեմարանի 25-րդ ուսումնական տարեշրջանի բացումը: Սույն թվականի սեպտեմբերի 13-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, թողնելով հովվական աշխատանքը Հյուսիսային Ամերիկայում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է վերադառնում Հոգեշնորհ Տ. Շնորհք վրդ. Գասպարյանը: Անսալով Հայրապետի խոսքին՝ Հայր սուրբը մեծ պատասխանատվությամբ եւ երախտագիտության զգացումով սեպտեմբերի 16-ին պաշտոնապես ստանձնում է ճեմարանի տեսչի պաշտոնը[5]:

Հոգեշնորհ Տ. Շնորհք վրդ. Գասպարյանը (ավազանի անունը՝ Արամ) ծնվել է 1929 թ. Ալեքսանդրիայում: Հիմնական կրթությունն ստացել է Երուսաղեմում: 1959-ին ձեռնադրվել է սարկավագ: 1961 թ. ձեռամբ Գերաշնորհ Տ. Մամբրե արք. Միրունյանի ձեռնադրվել է աբեղա: 1962-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Բաբկեն արք. Ապապյանի ստացել է վարդապետական աստիճան: 1969-1971 թթ. Վազգեն Հայրապետի օրհնությամբ եւ տնօրինությամբ շուրջ մեկ ու կես տարի պաշտոնավարել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությունը: 1974-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Թորգոմ արք. Մանուկյանի արժանացել է ծայրագույն վարդապետի աստիճանի: Այժմ Հոգեշնորհ Հայր սուրբն իր ծառայությունն է բերում Միացյալ նահագներում (Արեւելյան թեմ)[6]:

1969-1970 ուսումնական տարեշրջանի փակման հանդիսավոր արարողության ժամանակ Հոգեշնորհ Հայր սուրբն իր խոսքն այսպես սկսեց. «Մոտավորապես մի տարի առաջ էր, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով կանչվում էի Էջմիածին՝ ստանձնելու համար Հոգեւոր ճեմարանի տեսչությունը: Հայրապետական այդ բարձր հրավերը նույն ինքը ձայնն էր Հայոց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու. եւ ահա թե ինչու ես թողեցի իմ հովվական համեստ պաշտոնը եւ եկա այստեղ՝ միասին աշխատելու այս սուրբ հաստատության մեջ մեր Եկեղեցու մեծ բարիքին համար»[7]: 1969-1971 թթ. Վազգեն Վեհափառը, ի հակակշիռ պետական հակաեկեղեցական գործունեությանը, տեսչությունից պահանջում էր փոփոխել եւ կատարելագործել ուսումնական ծրագրերը, արհեստավարժ դասախոսներ հրավիրել, քանի որ նրանց հեպեռողական եւ արդյունավետ աշխատանքի շնորհիվ էր միայն հնարավոր ապահովել անհրաժեշտ

102:

4 «Էջմիածին», 1967, Է.-Ը., էջ 3:

5 Տե՛ս «Էջմիածին», 1969, Թ., էջ 12-13:

6 Այս մասին տե՛ս Մայր Աթոռի Դիվանապան արխիվ:

7 Անդ, 1970, Զ.-Է., էջ 55:

կրթական որակ[8]: Հայր սուրբը տեսչական գործունեության 1969-1970 թթ. սկսեց 35 ուսանողի հետ: Նրանց մեջ էին նաեւ Հոգեւոր ճեմարան ուսանելու եկած սփյուռքահայ 12 սան՝ 5 տարբեր երկրներից: Հոգեշնորհ տեսչի մտքից չէր կարող անհետանալ այն պարզ իրողությունը, որ ճեմարանը ոչ միայն մտքի, այլեւ հոգեւոր նկարագրի կերտման եւ դաստիարակման դարբնոց է: Հատկապես հեղսպալինյան շրջանում, երբ հայ ազգը խարխափում էր անհավատության խավարում, երբ Հայ Եկեղեցին այդքան բռնաճնշումներից եւ հալածանքներից հետո փորձում էր վերակենդանացնել մարդկանց քարացած սրտերը, ճեմարանի տեսչության եւ դասախոսական անձնակազմի նպատակն էր կրթել ոչ միայն մտավորականներ, այլեւ եկեղեցասեր եւ նվիրյալ հոգեւորականներ: Այդ իսկ պատճառով Հայոց Հայրապետի վերոնշյալ հանձնարարականը՝ հոգեւոր կրթական այդ հաստատությունում կազմակերպել տարաբնույթ եւ օգտաշահ դասախոսություններ, կյանքի կոչվեց:

Ուրախությամբ նշենք, որ Հայր սուրբն իր իսկ հոգեւոր եւ բարոյական նկարագրով օրինակ էր ուսանողության համար՝ կարեւորելով ուսանողների օրինապահությունն ու արժեւորելով աստվածաշնորհ խոնարհությունը: Այս առիթով 1969 թ. հոկտեմբերի 1-ին ուսանողության համար «Օրենք եւ հնազանդություն» խորագրով դասախոսություն է կարդում Հոգեշնորհ Հայր սուրբը: Տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը, Կաթողիկոսի տնօրինությամբ եւ տեսչի խնդրանքով, շուրջ 6 դասախոսություն է կարդում (հոկտեմբերի 3-ին, 14-ին, 20-ին, 24-ին եւ 28-ին)՝ «Տերունական աղոթքի մեկնություն», «Աստծո քրիստոնեական ըմբռնումը», «Մեր Եկեղեցու միաբնակ վարդապետությունը», «Հոգեւորականը եւ սեռական կյանքը», «Հավատամքի մեկնություն» ու «Աստծո մարդեղությունը եւ նպատակը» թեմաներով:

1969-ի հոկտեմբեր ամսին Մայր Աթոռում եպիսկոպոսաց ժողովին իր մասնակցությունն է բերում նաեւ Գ. Պոլսի Պատրիարքը՝ Ամենապատիվ Տ. Շնորհք արք. Գալստյանը: Հայոց Հայրապետի տնօրինությամբ՝ Տ. Շնորհք Պատրիարքը «Հոգեւորականի կոչումը» խորագրով դասախոսություն է կարդում ճեմարանականների համար (հոկտեմբերի 7-ին): Սույն թվականին ճեմարանում դասախոսում են նաեւ Շ. Սեւհոնքյանը՝ «Աստվածաբանության եւ գիտության հաշտեցումը» (հոկտեմբերի 17-ին), ճեմարանի տեսուչ Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Մարդկային արժեքը» (հոկտեմբերի 30-ին), Հռոմի Լեւոնյան հայ վարժարանի տեսուչ Տ. Ներսես վրդ. Սեթյանը՝ «Հոգեւորականի պատրաստության մեջ գիտության բաժանումը» (հոկտեմբերի 31-ին) եւ «Ազգասիրության իսկական իմաստը» (նոյեմբերի 4-ին), ճեմարանի դասախոս եւ աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը՝ «Աշխարհի յոթ հրաշալիքները» (նոյեմբերի 29-ին) թեմաներով:

«Բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» (Մատթ. Ի. 16). տիրավանդ այս խոսքի համաձայն՝ 1969 թ. դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վազգեն Հայրապետի օրհնությամբ եւ ներկայությամբ տեղի է ունենում սարկավագական ձեռնադրություն: Հետպատերազմական ծանր իրավիճակի, Եկեղեցու եւ հոգեւորա-

8 Տե՛ս **Եղիշե ավ. քհն. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 157:

կանության նկատմամբ ծավալվող հալածանքների եւ բռնաճնշումների պայմաններում, երբ նկատելի էր ուսանողության սակավությունը, նվիրյալ եւ եկեղեցասեր մեկ անձի ձեռնադրությունն անգամ մեծ փոնախմբություն էր Հայ Եկեղեցու համար: Ձեռնադրվողը ճեմարանի Գ. լսարանի սան Կարպիս Գալստյանն էր: Պահպանելով Մայր Աթոռի ավանդությունը՝ Պատարագի երգեցողությունը կատարում էր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Բարեշնորհ Արարատ սրկ. Գալստյանի[9]:

Տարեվերջը ճեմարանի համար գիտելյաց հունձքի շրջան էր: Դեկտեմբերի 27-ին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, ճեմարանի հանդիսությունների դահլիճում դասախոսների, միաբանների, ուսանողների ներկայությամբ 1968-1969 ուսումնական տարվա երեք շրջանավարտ սարկավագ բանավոր պաշտպանում են իրենց ավարտական աշխատանքները. Բարեշնորհ Հովհաննես սրկ. Գրիգորյանի ավարտաճառի նյութն էր «Սաղմոսաց գիրքը, նրա հեղինակը, լեզուն եւ գրության ժամանակը», Արարատ սրկ. Գալստյանինը՝ «Գեւորգ Դ. Կաթողիկոսը եւ հայ եկեղեցական երաժշտությունը», Հակոբ սրկ. Նալբանդյանինը՝ «Միջին հայերենի բառագանձը»: Ճեմարանի տեսուչը՝ լի ուրախությամբ, իր սիրտն ու հոգին է բացում ներկաների առաջ եւ փառք տալիս Երկնավորին, որ ճեմարանը վերազարթոնքի ճանապարհ է բռնել, քանի որ երեք շրջանավարտ սարկավագ ավարտաճառերի միջոցով հանդիսականներին փոխանցեցին իրենց մտավոր եւ հոգեւոր արժեքները: Այս առիթով իր գոհունակությունն է հայտնում Հայոց Հայրապետը՝ շրջանավարտ սարկավագներին հանձնելով դիպլոմները[10]:

1969 թ. դեկտեմբերի 31-ը առանձնահատուկ էր Մայր Աթոռի համար: Վազգեն Վեհափառի գլխավորությամբ Մայր Աթոռի ողջ միաբանությունը, ուսանողությունը եւ դասախոսական անձնակազմը համախմբվել էին սեղանի շուրջ՝ փոնախմբելու գալիք 1970 թվականը: Ավանդության համաձայն՝ այս հանդիսության պատասխանատվությունն ստանձնում է ճեմարանի տեսչությունը՝ դասախոսների եւ ուսանողների հետ միասին: Հանդիսության զեղարվեստական մասի պատասխանատուները ճեմարանականներն էին: Ճեմարանի երգչախումբը ղեկավարում էր Խորեն Մելիքանեջյանը: Շնորհալի սաներն իրենց ելույթներով՝ թե՛ երգով, թե՛ ասմունքով եւ թե՛ ծիծաղաշարժ ասույթներով զեղեցկացնում էին ամանորյա գիշերը: Ի դեմս Մայրավանքի միաբանության, դասախոսության եւ ուսանողության՝ Ազգիս Վեհափառ Հայրապետին իր շնորհավորական խոսքն է հղում ճեմարանի տեսուչը[11]:

Նոր տարին, ինչպես միշտ, ճեմարանի կյանքում սկսվում է քննաշրջանով: Բարեհաջող ամփոփելով ճեմարանի 1969-1970 ուստարվա Ա. կիսամյակը՝ տեսչությունն արձանագրում է նկատելի հաջողություններ եւ ձեռքբերումներ. եղել էին նաեւ որոշ թերացումներ: Ազգային եւ հոգեւոր արժեքներն ուսանողի կյանքում մշտարթուն պահելու նպատակով ուսումնական այդ տարվա Բ. կիսամյակում ճեմարանի տեսչությունը, ջմոռանալով երանաշնորհ Հայրապետի հրամանը, կազմակերպում է դասախոսություններ:

9 Տե՛ս «Էջմիածին», 1970, Ա., էջ 33-34:
10 Անդ, էջ 37:
11 Անդ, էջ 32:

Ճեմարանի հայոց լեզվի եւ գրականության դասախոս Արամայիս Սահակյանը բանասրեղծի՝ Գ. Էմինի ներկայությամբ խոսում է նրա կյանքի ու գրական գործունեության մասին: Ի հավելումն ամենի՝ ուսանողները արտասանում են հատվածներ բանաստեղծի ստեղծագործություններից (հունվար 24-ին):

Հայ ժողովրդի դարավոր պատմության անկյունաքարերից մեկը Վարդանանց՝ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մղած հերոսական պատերազմն էր: Ս. Վարդանանց տոնը (փետրվարի 5-ին), նաեւ ի պատիվ Վեհափառ Հայրապետի անվանակոչության, Մայր Աթոռի կրթական հաստատությունում նշվում է գրական-գեղարվեստական յուրահատուկ հանդեսներով: Մայր Տաճարում մատուցվող Ս. Պատարագի կոմիտասյան երգեցողությունը կատարում է ճեմարանի երգչախումբը: Պատարագից հետո ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում հետաքրքիր միջոցառում՝ նվիրված Ս. Վարդանաց հիշատակությանը:

Հայոց Հայրապետը մեծ հավատքով եւ երկյուղածությամբ էր մոտենում ծիսական արարողություններին: Մեծ Պահքի շրջանում Մայր Տաճարում կատարվելիք ժամերգություններին եւ Ս. Պատարագներին մշտապես ներկա էին գտնվում ճեմարանականները:

Մարտի 21-ին ճեմարանի հանդիսասրահում դասախոսություն է կարդում Ս. Անթոսյանը՝ «Հայ մշակույթի համաշխարհային արժեքը» նյութի շուրջ: Իսկ ապրիլի 5-ին «Ժաննա դ'Արկի կյանքն ու գործունեությունը» թեմայով դասախոսում է ճեմարանի ավագ դասախոս Գրիգոր Գյուլյանը: Ապագա եկեղեցականի՝ ճեմարանականի բարի նկարագիրն ու վարքը երբեք չի անտեսվել ո՛չ Հայրապետի, ո՛չ տեսչական եւ դասախոսական անձնակազմի կողմից: Այս առիթով ճեմարանի տեսչության խնդրանքով «Գործնական թելադրություններ նկարագրի կազմության համար» խորագրով դասախոսություն է կարդում վերապատվելի Մարգիս Կոնսուլյանը (ապրիլի 14-ին): Իսկ աշխարհագրագետ, դոցենտ եւ ճեմարանի հայրենագիտության դասախոս Կամսար Ավետիսյանը ուսանողության համար դասախոսում է «Վենետիկի եւ Միլանի հուշարձանները» նյութի շուրջ (մայիսի 2-ին):

Ինչպես հողագործն է քաղում իր հունձքը, նույնպես եւ ճեմարանի տեսուչն ամավերջյան հանդիսության ժամանակ, իբրեւ «մշակ առանց ամօթոյ», ներկայացնում է ուսումնական տարվա աշխատանքը: Հունիսի 6-ին, նախագահությամբ Մայր Տաճարի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հայկազուն արք. Աբրահամյանի, տեղի է ունենում Հոգեւոր ճեմարանի ամավերջյան հանդիսավոր արարողությունը: Տեսուչ Հայր Շնորհքն իր խոսքում երախտագիտությամբ հիշում է իր՝ Ամերիկայից Ս. Էջմիածին ժամանելը եւ պատասխանատվության բարձր գիտակցումով ճեմարանի տեսչի պաշտոնն ստանձնելը՝ ասելով. «Այս հաստատ համոզումով է, որ հեռավոր ԱՄՆ-ից մինչեւ Ս. Էջմիածին ահա քայլ առինք ու կմնանք փարած այս սուրբ գործին միացնել բոլոր այն երախտաւոր մշակների աշխատանքներին, որոնք այս հաստատության լուսեղեն կամարից անցել են»[12]: Ճեմարանի ավարտական Գ. լսարանի սան Բարեշնորհ Վարդան սրկ. Տեղեքյա-

12 Տե՛ս «Էջմիածին», 1970, Զ.-Է., էջ 55:

նը, ի դեմս ուսանողության, այսպես է բնութագրում իր տեսչին. «Երախտագիտության եւ շնորհակալության խոսք ունենք մեր շատ սիրելի տեսուչ Տ. Շնորք վրդ. Գասպարյանին, որ նույնքան մեզ սիրեց ու մեզ աջակից ու ապավեն եղավ փորձությանց եւ դժվարությանց պահերին, եղավ մեր սրտագին երեց եղբայրը՝ հավասարապես բաժանելով մեր ուրախություններն ու դժվարությունները»[13]: Տեսուչը գոհունակությամբ նշում է նաեւ, որ Հայոց Հայրապետի տեսլականը, որոշ չափով ի կատար է ածվում, քանի որ ճեմարանի շրջանավարտ սաները՝ լցված հոգեւոր եւ բարոյական արժեքներով, գալիս էին Քրիստոսի կենդանի վկաները դառնալու: Հայր սուրբի համար ամենակարեւորը ուսանողի հոգեւոր դաստիարակությունն ու բարոյական նկարագիրն էր:

Բացի այն, որ սաները մշտապես մասնակցում էին ժամերգություններին եւ Ս. Պատարագներին, անգամ ճաշարանում, բացի մարմնավոր հացից, սնվում էին Աստծո խոսքով՝ ընթերցելով Աստվածաշունչ մատյանը, հայրերի խրատներից եւ այլն: Տեսչական անձնակազմի աչքից երբեք չեն վրիպել սաների զանցառությունները, որոնք ի հարկի կա՛մ ներվել են, կա՛մ պատժի ենթարկվել՝ ուսանողների մեջ ինքնագիտակցության եւ պատասխանատվության զգացումն արթուն պահելու համար: Ազգի, մշակույթի եւ Եկեղեցու նկատմամբ սեր ու հարգանք ներշնչող Տ. Շնորհք վրդ. Գասպարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են խմբակային պտույտներ դեպի Ծիծեռնակաբերդ՝ Եղեռնի հուշարձան, Էրեբունի, Մատենադարան, պատկերասրահ, արդյունաբերական թանգարան, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, Մարտիրոս Սարյանի պատկերասրահ եւ ուխտագնացություններ դեպի Սաղմոսավանք, Մուղնու Ս. Գեւորգ, Գեղարդ, Արզնի, Սեւանի վանքեր, Հաղարծին, Հովհաննավանք եւ Գոշավանք[14]: Տեսուչը հրճվանքով բարձրաձայնում է. «Ս. Հաղորդություն սրանալու պարագային ջանացած ենք գիտակից համոզումով առաջնորդել տղաքը Աստծո Ս. Սեղանին՝ բացատրելով Ս. Հաղորդության անհրաժեշտությունը հոգեւոր կյանքի աճման համար, եւ հոգեկան ուրախությամբ նշմարած ենք հոգեւոր զգացումների ինքնաբուխ ծաղկումը նրանցից շատերի մեջ»[15]:

Ճեմարանի տեսչությունը հոգում էր նաեւ սաների ֆիզիկական առողջության մասին՝ հաճախակի կազմակերպելով ֆուտբոլի, բասկետբոլի եւ թենիսի մրցումներ:

1970-1971 ուսարին ճեմարանն սկսեց սեպտեմբերի 7-ին: Այդ տարի Հոգեւոր ճեմարանում կատարվեց 15 նոր ուսանողի ընդունելություն: Ուսանողության ընդհանուր թիվը 46-ն էր: Տեսուչն իր խոսքում ուսանողներին կոչ է անում՝ լինել համեստ, խելացի, խոնարհ, աշխատել ջանասիրաբար, ամբարել գիտելիք, պատրաստվել ծառայության սուրբ գործին, որին անհամբեր սպասում են մեր Եկեղեցին, ժողովուրդը[16]:

Սեպտեմբերի 19-ը տոն էր թե՛ ճեմարանի եւ թե՛ Մայր Աթոռի համար: Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ ճեմարանավարտ երեք միաբան սարկավագ բանավոր պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքները: Հայրապետը գոհունակությամբ շնորհավորում է սարկավագներին ավարտական աշխատանքների պաշտ-

13 Անդ:
14 Անդ, էջ 56-57:
15 Անդ, էջ 56:
16 Տե՛ս անդ, Թ., 57-58:

պանության առիթով եւ պատգամում՝ այսուհետ եւս լինել ինչպես հավատի ու ծառայության, այնպես եւ ուսման ու կրթության մշակներ, նվիրվածությամբ եւ խոնարհությամբ ծառայել մեր Եկեղեցուն եւ Հայրենիքին[17]:

1970 թ. ճեմարանի համար հոբելյանական էր, քանի որ լրանում էր հոգեւոր-կրթական այս հաստատության վերաբացման 25-ամյակը: Հոբելյանի առիթով Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ճեմարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Շնորհք վարդապետ Գասպարյանը պատարագ է մատուցում Մայր Տաճարում: Պատարագից հետո Վազգեն Ա. Հայրապետի հանդիսապետությամբ Գեւորգ կաթողիկոսների շիրմաքարերի մոտ կատարվում է Հոգեհանգստյան արարողություն: Այնուհետեւ երեկոյան, հանդիսության դահլիճում, մեծ շուքով տոնում են ճեմարանի վերաբացման հոբելյանը: Ճեմարանի ուսանողության անունից երախտագիտության եւ որդիական խոնարհության խոսք է ասում Գ. լսարանի սան Արտաշես Մուշեղյանը՝ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, տեսչական, դասախոսական անձնակազմին եւ հավելում. «Ուսանողության սրտագին այս խոսքը վերջացնելուց առաջ, ուզում եմ կրկնել մեր ուխտը հանդիսավոր կերպով, մի՛ անգամ եւս. ո՛ւխտ, որ հավերժական Արարատի դիմաց, Ս. Էջմիածնի գմբեթների տակ է հնչել: Ո՛ւխտ, որ նախնյաց գերեզմաններից է արձագանքել, որ երկնքով ու երկրով է հաստատվել եւ վերջապես Աստծո առջեւ է կատարվել: Կրկին ու կրկին ուխտում ենք հավատարի՛մ մնալ Ս. Էջմիածնին, մեր Ս. Հայրերի նշխարներին, ոգուն եւ պատգամներին ու խոստանում ենք նրանց առաքինությանն ու սրբությանը ապականություն չիառնել»[18]: Օրվա բանախոս եւ ճեմարանի ավագ դասախոս Արժանապատիվ Տ. Հովհաննես քահ. Մարուքյանը ուրախությամբ է ընդգծում, որ Ս. Էջմիածնի հոգեւոր դպրանոցը գոյություն է ունեցել դեռեւս Ե. դարից: Անհողդողդ կառչելով իր հայրենի արմատներին՝ Արժանապատիվ Տեր Հայրը հորդորում է ուսանողներին. «Պիտի ցույց տաք այնպիսի ուղղություն, որպեսզի մեր Եկեղեցին իր կրոնական եւ ազգային դիմագծից չշեղվի»[19]: Տեր Հայրը ցավով, բայց հպարտությամբ եւ ապագայի նկատմամբ մեծ հավատով ասում է. «25 տարին կարճ մի շրջան չէ սերունդ հասցնելու համար... Այս շրջանում ճեմարան է ընդունվել շուրջ 400 սան, որոնցից շուրջ 50-ն է ավարտել այն... այժմ ունենք 4 եպիսկոպոս, 10 վարդապետ, 8 քահանա հայր եւ 15 սարկավագ»[20], ապա մեջ է բերում Վազգեն Վեհափառի 1957 թ. հունիսի 25-ին ամավերջյան հանդեսի ժամանակ ասված խոսքից. «...Դուք պէտք է գիտութիւն ամբարէք անհագ ծարաւով եւ սիրով, հատկապէս երեք ուղղութեամբ պէտք է գինուէք. ա) սրբազան գիտելիքներով, բ) հայերէնով եւ գ) հայ ժողովրդի պատմութեամբ: Դուք ոչ միայն պէտք է սորվիք այն բոլորը, այլ տիրապետէք անոնց, հայոց պատմութիւնը ճեմարանցիի համար պէտք է ըլլայ երկրորդ Աւետարան: Տարիներ յետոյ, երբ դուք քարոզէք մեր ժողովրդին, ձեր մեկ ձեռքին պէտք է ունենաք Յիսուսի Աւետարանը, իսկ միւս ձեռքին՝ հայոց պատմութեան գիրքը»[21]: Եւ

17 Տե՛ս անդ, էջ 59-60:
18 Անդ, 1970, ԺԱ., էջ 43-44:
19 Անդ, էջ 47:
20 Անդ, էջ 48:
21 «Էջմիածին», 1957, Զ., էջ 26:

խոսքն ավարտում է այսպես. «Այս բոլորէն վերջ, Մենք կպահանջենք նաեւ ձեզմէ ճշմարիտ ժողովրդասիրութիւն եւ անկաշառ ու աննահանջ հայրենասիրութիւն»[22]:

Այդ ուսումնական տարում եւս կազմակերպվում են դասախոսություններ: Շուրջ կես տարի Մայր հայրենիքում գտնվող վաստակավոր մտավորական Հ. Ճ. Սիրունին մի շարք դասախոսություններ է կարդում ճեմարանականների համար: Հոկտեմբերի 30-ին ճեմարանում դասախոսություն է կարդում բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանը՝ «Մարդու անատոմիան» նյութի վերաբերյալ: Պետրոս Դուրյանի դիմաքանդակի վերականգման իր աշխատանքների մասին բանախոսում է բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ճաղարյանը: Բանախոսությունից հետո Պետրոս Դուրյանի ստեղծագործական կյանքի եւ վաստակի մասին զեկույց է ներկայացնում բանասիրական գիտությունների թեկնածու Ալբերտ Շարուրյանը (նոյեմբերի 10-ին): Իսկ նոյեմբերի 28-ին ճեմարանի ուսանողությունը տեսչի՝ Տ. Շնորհք վրդ. Գասպարյանի գլխավորությամբ այցելում է Սարդարապատի հուշահամալիր: Սաները ծանոթանում են Սարդարապատի հերոսամարտի պատմությանը եւ հուշարձանների կառուցողական արվեստին[23]: Դեկտեմբերի 14-ին հայրենիք էր ժամանել ամերիկահայ անվանի գրող Լեւոն-Զավեն Սյուրմելյանը: Վերջինս Շնորհք վրդ. Գասպարյանի խնդրանքով դասախոսում է «Հայ գրողի դերի եւ առաքելության մասին՝ հայ մշակույթի զարգացման եւ հայապահպանման նվիրական աշխատանքներում» նյութի շուրջ[24]:

Հոգեշնորհ Հայր սուրբի տեսչական գործունեությունը 1970-ի դեկտեմբերի 17-ին ավարտվում է: Հայոց Հայրապետի տնօրինությամբ Հայր Շնորհքը մեկնում է Ադիս-Աբեբա՝ մասնակցելու Ամանորի եւ Ս. Ծննդյան տոներին: Հակառակ քաղաքական, տնտեսական, ընկերային ծանր իրավիճակին՝ Հայր Շնորհքին ոչ ամբողջությամբ, բայց մեծ բերկրանքով եւ հոգեւոր նախանձախնդրությամբ հաջողվում է ճեմարանում եղած մեկ եւ կես տարիների ընթացքում պատրաստել ատրվածասեր, եկեղեցասեր եւ հայրենասեր հոգեւորականների, որոնք, իրապես, դարձան «մշակ առանց ամօթոյ»:

22 Անդ, էջ 27:
23 Տե՛ս անդ, Ժ., էջ 37-39:
24 Տե՛ս անդ, ԺԲ., էջ 31: